

ՀԵՌԱԳԻՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջին Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսէն

*«Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ*

*Ուրախութեամբ ստացանք ձեր «Չար-
թի՛ր» մանկականի առաջին թիւը:*

*Սրտանց կը շնորհաւորենք եւ բարձր
կը գնահատենք ձեր այս ձեռնարկը:*

Աքանջելի է ձեր առաջին խօսքը:

*Նիւթերը լաւ են ընտրուած եւ լաւ
մատուցուած՝ մանկավարժօրէն:*

*Սուրբ էջմիածինէն մեր գնահատան-
քը, քաջալերանքը եւ օրհնութիւնը Օրդ-
Սիլվային, Տիար Նուպարին եւ գծագրիչ
Փօլին:*

*Թող միշտ ազատ եւ անոյշ հնչէ Հայ
Ամերիկայի Չարթի՛րը»:*



ՀԻՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Հին ժամանակ Հայոց Նոր Տարին հայկական տոմարի (օրացոյց կամ տարեցոյց) առաջին ամսուն կը սկսէր:

Հայկական տոմարի առաջին ամիսը Նաւասարդ կը կոչուէր:

Եւ որովհետեւ ճիշդ այդ ատեն կ'իյնար նաեւ հայոց հունձքի շրջանը՝ ուստի այդ օրը թէ՛ իբրեւ Նոր Տարի եւ թէ՛ իբրեւ հունձքի տօն՝ մեծ փառաւորութեամբ կը տօնուէր բոլոր հայերուն կողմէ:

Նաւասարդեան զբօսանքներու անբաժան մաս կը կազմէին խմբական որսորդութիւններ եւ ողիմպիական խաղեր:



ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՆՈՐ ՏԱՐԻ

Նոր Տարին, ինչպէս ծանօթ է, կը կոչուի նաեւ Ամանոր:

Հին հայերէնի, այսինքն գրաբարի մէջ «ամ» կը նշանակէ «տարի»:

Իսկ ժողովրդական բառն է Կաղանդ, որ կը նշանակէ «ամսուան առաջին օրը»:

Այդ օրը հայերուս համար պարզեւաբաշխութեան օր մըն էր եւ այդ պատճառաւ այդ օրուան նուէրներն ալ կաղանդէք կը կոչուին:

Նոր Տարիի համար կը գործածենք նաեւ «Տարեգլուխ», «Տարեմուտ» եւ «Տարենոր» բառերը:

ՆՈՐ ՏԱՐԻԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Հայ ժողովուրդի Նոր Տարիի աւանդական սովորութիւններուն մէջ չենք հանդիպիր կաղանդի ծառի կամ կաղանդ պապայի: Այս սովորութիւնները աւելի ուշ մուտք գործած են մեր տօնախմբութեան մէջ:

Հայ ժողովուրդի Նոր Տարիի տօնախմբութեան մաս կը կազմեն հետեւեալները.

Ա- Տօնը կանխող շնորհաւորութիւններ

Բ- Տօնական յատուկ ուտեստեղէններ

Գ- Հաւատալիքներ

Դ- Պարգեւաբաշխութիւն եւ շնորհաւորութիւն



Ա. ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի մէջ գրեթէ տարածուած սովորութիւն մըն էր, որ կաղանդի նախորդ իրիկունը, կամ Դեկտեմբեր 31-ի գիշերը, տղաք խմբովին տունէ տուն պտտելով ու երգելով Նոր Տարին կը շնորհաւորէին տնեցիներուն, անոնցմէ ընդունելով զանազան նուէրներ:

Կարին քաղաքին մէջ հետեւեալ շնորհաւորական երգը կ'երգէին.

«...Ահա եկաւ Նոր Տարի,
հետը բերաւ Նոր բարի.
մանր տղաք ենք ուրախ
ունինք կաղին, կողինախ...»

Շնորհաւոր Նոր Տարի

Եւ

Բարի Կաղանդ

Բ. ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Հայկական կաղանդի առանձնայատկութիւններն են Նոր Տարուան յատուկ ուտելիքները: Կաղանդի սեղանին ուտելիքներու մէկ մասը առաջուրնէ պատրաստուած պտուղներ են, ինչպէս՝ չամիչ, ընկոյզ, կաղին, նուշ, սիսեռ, արմաւ, թուզ, պաստեղ եւայլն: Իսկ միւս մասն ալ Դեկտեմբեր 30-ին, 31-ին եւ կամ Կաղանդի Օրը կը պատրաստուի: Ասոնք խմորեղէններ կամ յատուկ ուտելիքներ են, ինչպէս՝ «անուշապուր»ը, «հերիսան» եւայլն:

ՏԱՐԻՆ


Խմորեղէններու մէջ առաջին տեղը կը գրաւէ «Տարին»ը, որ խորհրդանշանն է Նոր Տարին: «Տարին»ը ցորենի ալիւրով ու ջուրով կամ կաթով շաղուուած մեծ, բոլորչի եւ տափակ հաց մըն է, որ տեղ տեղ վրայի կողմէն զանազան մասերու բաժնուած կ'ըլլայ:

ԿԱԹԱՅ

Հայկական կաղանդի սեղանին անհրաժեշտ խմորեղէնն է նաեւ «կաթայ»ն, որ պատրաստութեան յատուկ ձեւ մը ունի:

Նիւթերն են՝ ցորենի ալիւր, «արդար իւղ» (կարագ), հաւկիթ, կաթ եւ խորիսի:

Նոր Տարիի «կաթայ»ն լուսաւորչական հայոց քով, մեղրով կը պատրաստուի, տրուած ըլլալով որ Նոր Տարին Ծնունդի շաբաթապահքի շրջանին մէջ կ'իյնայ:



Գ. ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐ

Հայ ժողովուրդի Նոր Տարիի տօնակատարութեան կապուած են քանի մը հաւատալիքներ կամ աւելորդապաշտութիւններ, որոնք հաւանօրէն մնացորդներ են հեթանոսական շրջանին.

Հայաստանի մէջ ընդհանրապէս կը հաւատային որ Կաղանդի նախորդ գիշերը, ճիշդ կէս գիշերին, բոլոր վագող ջուրերը (աղբիւր, գետ) վայրկեան մը (կամ ժամ մը) ոսկի կը հոսին: Ով որ կրնայ ճիշդ այդ վայրկեանին աղբիւրէն ջուր առնել՝ այդ ջուրը ոսկիի կը փոխուի: Ահա ասոր համար երիտասարդ մանչեր կամ աղջիկներ, ձմրան այդ սառ ցուրտին, որքան ալ հեռու ըլլան՝ ամաններով կը փութան աղբիւրը կամ գետը՝ կանուխէն հոն գտնուելու եւ սպասելու այդ հրաշալի ակնթարթին: Երբ հասնի այդ վայրկեանը՝ իսկոյն կը լեցնեն իրենց ամանը եւ առանց ետ նայելու կամ մէկուն հետ խօսելու տուն կ'աճապարեն, այնպէս կարծելով որ ոգիները գիրենք կը հետապնդեն...:



Գ. ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Կաղանդի օրուան Պատարագէն ետք, երբ ընտանիքին հայրը եկեղեցիէն տուն կը դառնայ՝ առաջին անգամ իր գաւակներէն կ'ընդունի Կաղանդի շնորհաւորութիւնը՝ աջահամբոյրով: Կարգ մը գիւղերու մէջ սովորութիւն է, որ առաջին շնորհաւորողը՝ դրամական նուէր կ'ընդունի հօրմէ: Իսկ այլ գիւղերու մէջ հայրը կը պարգեւատրէ բոլորը նշխարով, դրամով եւ պտուղներով:

Երեկոյեան ճաշէն երկու-երեք ժամ ետք, կը դրուի Կաղանդի սեղանը, որ կը զարդարուի մեծ մասով չոր, նաեւ թարմ պտուղներով:

Սեղան նստելէ անմիջապէս առաջ կը վառուին մոմեր ամէն անձի համար:

Երբ ընտանիքին բոլոր անդամները կը շարուին Կաղանդի սեղանին շուրջը, մեծերը ամէն մէկ պատիկի կու տան խնձոր մը, որուն վրայ քանի մը պղինձ կամ արծաթ դրամ շարուած կ'ըլլայ: Արծաթ դրամ շարելը հարուստներու սովորութիւնն էր:

Պատիկները կարգով կը համբուրեն մեծերուն ձեռքերը, անոնց օրհնութեան հետ կ'առնեն իրենց նուէր խնձորը եւ կը նստին իրենց տեղը:

Այդ վայրկեանին կը սկսի Կաղանդի կերուխումը: Մաղթանքները իրարու կը յաջորդեն:

Երբ օդը նպաստաւոր ըլլայ, տուներու ծխնելոյզներէն կողովներով վար կը կախուին տղոց նուէրները: Փոքրերն այնպէս կը հաւատային թէ այդ կողովը վար կը կախէ Կաղանդ Պապան, որ տանիքէ տանիք կ'անցնի եւ նուէրներ կը բաժնէ բարի տղոց միայն:

Երբ մոմերը հատնելու աստիճանին կը մօտենան, կը վերջանայ Կաղանդի տօնակատարութիւնը: Ամէն մարդ կը պատրաստուի քնանալու:

Առտուն կանուխ կ'ելլեն մեծերը եւ եկեղեցի կ'երթան:

Նոր Տարուան օրը ամէն մարդ կը հագնի իր նոր զգեստները: Մասնաւորաբար փոքրերը եւ պատանիները այս առիթով նուէր կը ստանան նոր հագուստներ, որպէս զի ամբողջ տարին մաքուր հագնին:

Տարուան առաջին օրը բոլորն ալ ուրախ տրամադրութեան մէջ պէտք է ըլլային: Ասիկա կը նկատուէր շատ կարեւոր պայման մը, որպէս զի ամբողջ տարին գուարթութիւն բերէր:


Այդ օր ազգականներ ու բարեկամներ իրարու կ'այցելեն եւ կը շնորհաւորեն Նոր Տարին:

Հ.Ե.Վ.Պ.



ՄԵՆՔ ԱՆՈՒՇԱՊՈՒՐ ՊԻՏԻ ՊԱՏՐԱՍՏԵՆՔ

- Մէկ գաւաթ ծեծած
- Ծեծածին 14 անգամը ջուր
- Մէկ գաւաթ դեղին չամիչ
(առանց կուտի)
- Մէկ գաւաթ շաքար
- Մէկ գաւաթ չոր ծիրան (առանց կուտի)
- Մէկ գաւաթ չոր սալոր (առանց կուտի)
- Մէկ ապուրի դգալ անխոն (լման)
- Երկու ապուրի դգալ վարդի ջուր
- Կէս գաւաթ սոնոպրա
- Կէս գաւաթ նուշ
- Կէս գաւաթ ընկոյզ
- Մէկ գաւաթ քիչմիչ
- Մէկ ապուրի դգալ կինամոն (սինամոն)



ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

- 1- Ծեծածը լուալ պաղ ջուրով եւ ապա չորցնել
- 2- Կաթսային մէջ դնել ծեծածը, ջուրը աւելցնելէ ետք կափարիչը գոցել եւ եռացնել
- 3- Առաջին եփին, կրակը մարել, լաթով մը ծածկելէ ետք ամբողջ գիշերը ձգել
- 4- Յաջորդ օրը, ցած կրակի վրայ, առանց խառնելու, մէկ ու կէս ժամ եփել
- 5- Ապա խառնիչով մը լաւ մը զարնել եփած ծեծածը
- 6- Ծեծածը զարնելէ ետք, աւելցնել նախ շաքարը, ապա սոնոպրան եւ վերջն ալ նուշը (նուշը ջուրով եփել, կեղեւը հանել եւ կիսել նախքան գործածելը)
- 7- Անխոնը բարակ լաթի մը մէջ դնել, կապել եւ կաթսային մէջ դնել
- 8- Քսան վայրկեան ետք կրակը մարել, ապա աւելցնել վարդի ջուրը, եփած ծիրանը, եփած սալորը (ծիրանը եւ սալորը ջուրով քիչ մը եփել եւ կիսել նախքան գործածելը), ապա չամիչը եւ քիչմիչը
- 9- Լաւ մը խառնելէ ետք, անուշապուրը խորունկ պնակներու մէջ պարպել եւ

երեսները արեւի ձեւով, աստղի ձեւով եւ կամ ալ շրջանակաձեւ զարդարել ծիրանով, սոնոպրայով եւ կիսուած ընկոյզով

10- Չարդարանքը ամբողջացնել անուշապուրին վրայ կինամոն ցանելով:

ԿԱՂԱՆԴ Է ԱՅՍՕՐ

Կաղանդ է այսօր
Փոքրիկներու օր,
Որքան փոքրիկներ
Կը ստանան նուէր:



Չամի՛չ, շաքարներ,
Կաղի՛ն, ընկոյզներ,
Կը լեցուին այսօր
Գրպաններն բոլոր:

Թմբուկ ու փողեր,
Արջեր ու ձիեր.
Կառքեր, սահնակներ
Սիրո՛ւն գնդակներ:

Կաղա՛նդ է այսօր,
Փոքրիկներու օր,
Ի՛նչ ալ աղուոր օր,
Թող գայ ամէն օր:

ՅԻՍՈՒՍ ՅՈՒՆՈՒԱՐ 6-ԻՆ ԾՆԱԾ Է

– Մեծ մայրիկ, կրնա՞ս մեզի Յիսուսի Ծնունդի մասին խօսիլ: Ո՞վ էր իր մայրը, ո՞վ էր իր հայրը, ո՞ր ծնաւ եւ ի՞նչ հետաքրքրական բաներ պատահեցան:

– Ո՛հ, շատ երկար պատմութիւն է, սիրելի թոռնիկներս: Երկար է, բայց շատ գեղեցիկ եւ հետաքրքրական: Եկէ՛ք իմ քովս նստեցէ՛ք որ պատմեմ,- ըսաւ Մեծ մայրիկը գոհունակ ժպիտով մը:

Բոլորը հաւաքուեցան կրակարանին շուրջ եւ սկսան մտիկ ընել մեծ մայրիկը: Ժամանակին, ասկէ շա՛տ շա՛տ տարիներ առաջ, Մարիամ անունով աղջիկ մը կար, որ շատ երիտասարդ, գեղեցիկ եւ բարի մէկն էր: Ան ամէն օր կ'աղօթէր եւ Աստուծոյ խօսքերուն կը հետեւէր:

Նոյն շրջանին կ'ապրէր նաեւ Յովսէփ անունով բարի եւ աղօթասէր երիտասարդ մը: Օր մը ան երբ տեսաւ Մարիամը, շատ հաւնեցաւ եւ նշանուեցաւ անոր հետ Նազարէթ քաղաքին մէջ:

Օր մը Մարիամ իր տունը նստած կ'աղօթէր, յանկարծ Աստուծոյ հրեշտակը երեւցաւ իրեն եւ ըսաւ.



– Քեզի բա՛րի լուր մը ունիմ տալիք:

Մարիամ ապշած դիտեց չորս կողմը եւ հրեշտակին նայելով ըսաւ.

– Ի՞նչ է այդ բարի լուրը, որ պիտի տաս ինձի:

– Աստուած քեզ շատ կը սիրէ եւ Անոր շնորհքին արժանացար. զաւակ մը պիտի ունենաս եւ զԱյն պիտի կոչես Յիսուս: Անիկա Աստուծոյ Որդին պիտի ըլլայ եւ պիտի թագաւորէ ամբողջ աշխարհին վրայ եւ ամբողջ աշխարհը պիտի փրկէ մեղքերէ:

– Բայց,- ըսաւ Մարիամ շուարած,- ես ի՛նչպէս զաւակ պիտի ունենամ. տակաւին չեմ ամուսնացած:

– Աստուծոյ զօրութեամբ,- ըսաւ հրեշտակը:

Եւ որովհետեւ Մարիամ շատ բարի ու հնազանդ աղջիկ մըն էր, անմիջապէս ըսաւ.

– Ուրեմն թո՛ղ Աստուծոյ կամքը ըլլայ:

Ինն ամիսներ ետք, օր մը Յովսէփի եւ Մարիամ Նազարէթէն գացին Բեթղեհէմ, Դաւիթ թագաւորին քաղաքը: Ուշ գիշեր էր եւ օդը՝ սաստիկ ցուրտ:

Բեթղեհէմի մէջ, անոնք սկսան տեղ փնտռել քնանալու համար, բայց բնակարան մը չգտան. ատոր համար՝ գիշեր ատեն ստիպուեցան քնանալ ախոռի մը մէջ, ուր հովիւներ ոչխար կը պահէին:

Եւ ահա այս պայմաններուն տակ, Մարիամ ունեցաւ խոստացուած զաւակը: Ախոռին մէջ ո՛չ անկողին կար եւ ո՛չ օրօրոց:

Մարիամ եւ Յովսէփի անմիջապէս խանձարուրով մը փաթթեցին Նորածինը եւ դրին ախոռի մսուրին մէջ, ուր կային նաեւ կովեր եւ էջեր, որոնք կամաց կամաց մօտեցան Նորածինին եւ իրենց շունչով սկսան տաքցնել զԱյն:

Մօտակայ դաշտի մը մէջ, հովիւներ ոչխար կ'արածէին: Յանկարծ երկինքը

փայլեցաւ, հովիւները վախցան, բայց իսկոյն Աստուծոյ հրեշտակը երեւցաւ անոնց ու ըսաւ.



– Մի՛ վախնաք, ուրախալի լուր մը բերած եմ: Հիմա ձեզի Փրկիչ մը ծնաւ Բեթղեհէմի մէջ: Գացէ՛ք զԱյն տեսնելու:

Նոյն պահուն, խումբ մը հրեշտակներ կ’երգէին.

– Փառք Աստուծոյ, բարձունքներու մէջ, խաղաղութիւն երկրի վրայ ու հաշտութիւն մարդոց միջեւ:

Հովիւները անմիջապէս գացին Նորածին Մանուկին քով եւ բոլորն ալ կարգով երկրպագեցին եւ ոչխար նուիրեցին:

Հրէաստանի Արեւելեան կողմը կային ժողովուրդներ, որոնք կը պաշտէին արեւն ու լուսը: Անոնք ունէին քահանաներ, որոնք մոգ կը կոչուէին:


Գիշեր մը, Արեւելքէն երեք մոգեր (Մելքոն, Գասպար եւ Պաղտասար) շատ փայլուն եւ զարմանալի աստղ մը տեսան երկինքին վրայ: Երկար մտածելէ ետք հասկցան որ Հրէաստանի մէջ Նոր Թագաւոր մը ծնած էր: Անոնք շատ փափաքեցան տեսնել նոր ծնած Արքան: Ուստի փայլուն աստղին ուղղութեամբ ուղտերով եւ նուէրներով ճամբայ ելան:

Փայլուն աստղը գանոնք առաջնորդեց այնտեղ, ուր ծնած էր Յիսուս Մանուկը:

Երեք մոգերը (Թագաւորները) ներս մտան: Նորածին Թագաւորը՝ Յիսուս Մանուկ, իր մօրը գրկին մէջ էր: Խոնարհեցան անոր առջեւ, երկրպագեցին եւ սուին իրենց թանկագին նուէրները (ոսկի, անուշահոտ, խունկ եւ զմուռս):

Մեծ մայրիկը երկար շունչ մը առաւ եւ այստեղ վերջացուց իր պատմութիւնը:

Թոռնիկներուն քունը եկած էր: Անոնք Մեծ մայրիկէն խնդրեցին որ Յիսուսի կեանքին պատմութիւնը շարունակէ յաջորդ օրը, եւ իրենց սենեակները գացին քնանալու:



ԽՈՐՀՈՒՐԳ ՄԵԾ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի,
որ յայսմ աւուր յայտնեցաւ.
հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ
ի Բեթղեհէմ քաղաքի.
որդի՛ք մարդկան, օրհնեցէ՛ք,
զի վասն մեր մարմնացաւ:



Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ:



ԳԻՏԷ՞Ք ՔԱՀԱՆԱՆ Ի՞ՆՉ Կ'ԸՆԷ Ս. ԾՆՈՒՆԳԻ ՕՐԸ

- 1- Սուրբ Պատարագ կը մատուցանէ:
- 2- Ս. Պատարագէն անմիջապէս ետք կը սկսի իր ծուխի ընտանիքներուն այցելել:
- 3- Քահանան, սարկաւազը կամ դպիրը տուն մտնելուն պէս խունկ կը ծխեն, տանտիկինին կողմէ նախապէս պատրաստուած խնկամանին մէջ:



- 4- Ապա տունին աղջիկ գաւակը ներս կը բերէ ափսէ մը գաւաթ մը ջուրով, աղով եւ հացով:
- 5- Քահանան կ'օրհնէ այս բոլորը, ինչպէս նաեւ տունը, եւ նշխար մը տալէ ետք կը շնորհաւորէ Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:
- 6- Ընտանիքին բոլոր անդամները շնորհաւորութիւնները կ'ընդունին առանձին առանձին գալով եւ քահանային խաչը համբուրելով:
- 7- Քահանան եւ սարկաւազը կը մեկնին տանտիրոջ կողմէ իրենց տօնական օրերու առիթով տրուած նուէրով:
- 8- Ծնունդի տօնական օրերուն առիթով պայման էր որ քահանան այցելէր իր ծուխի բոլոր ընտանիքներուն:

ԳԻՏԷ՞Ք ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ՀԱՅՐԻԿԸ, ՄԱՅՐԻԿԸ ԵՒ ՉԱՒԱԿՆԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՆԵՆ Ս. ԾՆՈՒՆԴԻ ՕՐԸ

Հայրիկը. Ս. Ծնունդի օրը հայրիկը Ս. Պատարագին ներկայ գտնուելէ եւ ճաշէն անմիջապէս ետք կ'այցելէ իր բոլոր ազգականներուն տուները (այցելութիւնը կը տեւէ 10-15 վայրկեան): Երեկոյեան տուն կը վերադառնայ իրեն հրամցուած անուշեղէններով, որոնք կը բաժնէ իր գաւակներուն:

Մայրիկը. Ս. Պատարագին ներկայ գտնուելէ ետք տուն կ'երթայ ճաշի սեղանը

կը պատրաստէ: Ճաշէն անմիջապէս ետք կը պատրաստուի ընդունելու հիւրեր, որոնց կը հրամցնէ խմիչք եւ անուշեղէններ:

Ջաւահները. Ս. Պատարագին ներկայ գտնուելէ ետք, տունին մանչ գաւակը հօրը հետ տուները կ'այցելէ: Իսկ մնացեալ գաւակները տունը կը մնան եւ աղջիկ գաւակը կ'օգնէ իր մօրը՝ հիւրերը ընդունելու ու մեծարելու:

ԾՆՆԴԵԱՆ ԱՌԹԻՒ

Չեզի Մեզի Մեծ

Աւերիս

Քրիստոս Ծնաւ եւ

Յայրնեցաւ

Օրհնեալ է

Յայրնութիւն Քրիստոսի



Յունուար 5 - Ճրագալոյց (Խթում)

Ս. Պատարագ եւ Խթման Ճաշ

Յունուար 6 - Ս. Ծնունդ (Ս. Պատարագ)

Յունուար 7 - Մեռելոյց (Ս. Պատարագ եւ այցելութիւն գերեզմանատուն, աղօթք ննջեցեալներու հոգիներուն համար)